Հավելված
Հաշվեքննիչ պալատի 2020 թվականի
հուլիսի 30-ի թիվ 116-Ա որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏ

ԸՆԹԱՑԻԿ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԵՐԵՔ ԱՄԻՍՆԵՐԻ ՄՈՒՏՔԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԵՎ ԵԼՔԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳՎԱԾ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

2020

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ՆԵՐԱԾԱԿԱՆ ԱՍ 3-4 էջ
2. ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ 4-5 էջ
3. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԱՍ 6-7 էջ
4. ԱՆՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ և ԽԵՂԱԹՅՈՒՐՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՐԱՌՈՒՄՆԵՐ 7-17 էջ
5. ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏԻ ՂԵԿԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ և ԲԱՑԱՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ՀԱՇՎԵՔՆՆՈՂՆԵՐԻ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 17-21 էջ
6. ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ 22 էջ

1. ՆԵՐԱԾԱԿԱՆ ՄԱՍ

Հաշվեքննության հիմքը	**ՀՀ հաշվեքննիչ պալատի 2020 թվականի մայիսի 26-ի թիվ 68/Ա որոշում[1]:**
Հաշվեքննության օբյեկտը	ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն:
Հաշվեքննության առարկան	Մուտքերի ձևավորման և ելքերի իրականացման կանոնակարգված գործունեություն:
Հաշվեքննության չափանիշները	«Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենք, «Սոցիալական աջակցության մասին» ՀՀ օրենք, «Դրամարկղային գործառնությունների մասին» ՀՀ օրենք, «Գանձապետական համակարգի մասին» ՀՀ օրենք, ՀՀ կառավարության 2015 թվականի սեպտեմբերի 25-ի թիվ 1112-Ն որոշում, ՀՀ կառավարության 2018 թվականի փետրվարի 15-ի թիվ 163-Ն որոշում, ՀՀ կառավարության 2007 թվականի մայիսի 31-ի թիվ 730-Ն որոշում, ՀՀ կառավարության 2004 թվականի օգոստոսի 5-ի թիվ 1324-Ն որոշում, ՀՀ կառավարության 2014 թվականի ապրիլի 17-ի թիվ 534-Ն որոշում, ՀՀ ֆինանսների նախարարի մարտի 13-ի թիվ 254-Ն հրաման, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 2018 թվականի հունիսի 1-ի 69-Ա/1 հրաման, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 2014 թվականի հունիսի 30-ի թիվ 79-Ա հրաման, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 2019 թվականի հունիսի 13-ի թիվ 751-Ն հրաման, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 2014 թվականի հուլիսի 30-ի 79-Ա հրաման և կանոնակարգող այլ նորմատիվ իրավական ակտեր:
Հաշվեքննությունն ընդգրկող ժամանակաշրջանը	2020թ. հունվարի 1-ից մինչև 2020թ. Մարտի 31-ը ներառյալ:

Հաշվեքննության կատարման ժամկետը	2020թ. հունիսի 8-ից մինչև 2020թ. հուլիսի 31-ը ներառյալ:
Հաշվեքննության մեթոդաբանությունը	Հաշվեքննությունն իրականացվել է «Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքի, Հաշվեքննիչ պալատի ֆինանսական և համապատասխանության հաշվեքննության գործող մեթոդաբանությունների և պետական բյուջեի երեք, վեց, ինն ամիսների և տարեկան կատարման հաշվեքննության ուղեցույցի համաձայն: Իրականացվել է ֆինանսական և համապատասխանության հաշվեքննություն, որի ընթացքում կիրառվել են զննում, հարցում, արտաքին հաստատում, վերլուծական ընթացակարգ, վերահաշվարկ ընթացակարգերը:
Հաշվեքննությունն իրականացրած կառուցվածքային ստորաբաժանում	Հաշվեքննությունն իրականացվել է ՀՀ հաշվեքննիչ պալատի առաջին վարչության կողմից, որի աշխատանքները համակարգում է ՀՀ հաշվեքննիչ պալատի անդամ Կարեն Կարապետյանը:

2. ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունից ՀՊԵ-ԿԿ-43 առ 9-ը հունիսի 2020 թվականի գրությամբ հաշվեքննության շրջանակներում պահանջվել է ամբողջական տեղեկատվության տրամադրում, որը համաձայն «Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 2-րդ մասի պետք է ներկայացվեր 30-օրյա ժամկետում, սակայն այն ՀՀ հաշվեքննիչ պալատ մուտք է եղել 13.07.2020թ.-ին: Ուսումնասիրելով ներկայացված տեղեկատվությունը պարզվել է, որ այն ամբողջական չէ, քանի որ բացակայում են բազմաթիվ անհրաժեշտ տվյալներ: Հաշվեքննություն իրականացնող պաշտոնատար անձինք, օգտվելով ՀՀ ֆինանսների նախարարության գանձապետական վճարահաշվարկային էլեկտրոնային /LSFINANCE

և LSREP/ համակարգերի շտեմարաններից, ինչպես նաև հասանելի այլ պաշտոնական աղբյուրներից կարողացել են ստանալ բավարար տեղեկատվություն սույն հաշվեքննությունն իրականացնելու համար:

Վերը նշվածը, ինչպես նաև ՀՀ տարածքում կորոնավիրուսային հիվանդությամբ (COVID-19) պայմանավորված հանգամանքները, զգալի դժվարություններ են առաջացրել հաշվեքննությունն ըստ ծրագրերի և միջոցառումների կատարման ռիսկերի ամբողջական և

համակողմանի գնահատման գործընթացում: Միևնույն ժամանակ դրանք առավել ակնբախ կլինեն հաջորդող վեց, ինը և տարեկան հաշվեքննություններն իրականացնելիս: Հաշվի առնելով այդ հանգամանքը, 2020 թվականի ՀՀ պետական բյուջեի առաջին երեք ամիսների հաշվեքննության իրականացման համար որպես ռիսկային խնդիր է դիտարկվել՝ նախատեսված ծրագրերի և միջոցառումների մասով հաշվետու ժամանակահատվածի բյուջեի կատարողականի թերակատարումների և բյուջեի կատարողականի վերաբերյալ ՀՀ կառավարություն ներկայացրած հաշվետվություններում բերված ցուցանիշներում փաստացի կատարվածի իրական ծավալները մասնակի ընդգրկելու, իսկ որոշ դեպքերում առհասարակ չներառելու խնդիրները:

ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2020 թվականի ՀՀ պետական բյուջեի երեք ամիսների մուտքերի ձևավորման և ելքերի իրականացման կանոնակարգված գործունեության նկատմամբ իրականացված հաշվեքննության ընթացքում էական խեղաթյուրումներ չեն հայտնաբերվել, իսկ հայտնաբերված խեղաթյուրումները համատարած չեն և հաշվեքննության առարկային վերաբերող հաշվետվությունները էականորեն խեղաթյուրված չեն:

Կարեն Կարապետյան
ՀՀ հաշվեքննիչ պալատի անդամ
31 հուլիս 2020 թվական _____

ՀՀ հաշվեքննիչ պալատ,
Մ.Բաղրամյան պող. 19, ք.Երևան,
Հայաստանի Հանրապետություն

3. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԱՍ

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2020 թվականի բյուջեի ծախսերի տարեկան պլանը կազմել է 31,339,021.1 հազ. դրամ, տարեկան ճշտված պլանը կազմել է 20,430,121.02 հազ. դրամ: Ընդհանուր առմամբ նվազեցումները և ավելացումները հաշվի առած՝ կատարվել է 10,908,900.08 հազ. դրամի չափով նվազեցում: Նվազեցումը հիմնականում պայմանավորված է «Պետական հիմնարկների և կազմակերպությունների աշխատողների սոցիալական փաթեթով ապահովում» 1015-12001 ծրագրով նախատեսված 10,430,507.5 հազ. դրամ գումարը բյուջետային համապատասխան մարմիններին բաշխմամբ:

Առաջին եռամսյակի պլանը կազմել է 5,803,967.2 հազ. դրամ, ճշտված պլանը՝ 4,093,028.32 հազ. դրամ: Ընդհանուր առմամբ նվազեցումները և ավելացումները հաշվի առած՝ կատարվել է 1,710,938.88 հազ. դրամի նվազեցում 29.5%-ի չափով: Նվազեցումը հիմնականում պայմանավորված է «Պետական հիմնարկների և կազմակերպությունների աշխատողների սոցիալական փաթեթով ապահովում» 1015-12001 ծրագրով նախատեսված 1,738,669.9 հազ. դրամ գումարը բյուջետային համապատասխան մարմիններին բաշխմամբ: Կատարվել է նաև ավելացումներ, օրինակ «18 տարեկանից բարձր տարիքի անձանց համայնքային փոքր տներում խնամքի կազմակերպման համար անշարժ գույքի ձեռքբերում» 1032-31001 ծրագրով տարեկան պլանավորում չի իրականացվել, սակայն ճշտված պլանով այն կազմել է 21,246.4 հազ. դրամ, որն ամբողջությամբ ընդգրկվել է եռամսյա ճշտված պլանում:

Դրամարկղային ծախսը կազմել է 2,198,748.98 հազ. դրամ: Դրամարկղային ծախսի և ճշտված պլանի տարբերությունը կազմում է 1,894,279.34 հազ. դրամ, կատարման տոկոսը հաշվետու ժամանակաշրջանի ճշտված պլանի նկատմամբ կազմում է 53.7 տոկոս: Փաստացի ծախսը կազմել է 3,052,071.94 հազ. դրամ, դրամարկղային ծախսի նկատմամբ տարբերությունը կազմում է 853,322.96 հազ. դրամ, փաստացի կատարման տոկոսը հաշվի առնելով փաստացի ծախսը /կատարողականը/ ճշտված պլանի նկատմամբ կկազմի 74.6 տոկոս: Դեբիտորական պարտքը կազմել է 2,014,378.99 հազ. դրամ, կրեդիտորական պարտքը՝ 848,568.77 հազ. դրամ:

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2020թ. առաջին եռամսյակում իրականացված պետական գնումների գործընթացի վերաբերյալ

Համաձայն 2020 թվականի պետական բյուջեի մասին ՀՀ օրենքի, ՀՀ աշխատանքի և սոցիալական նախարարության գնումների պլանը սահմանվել է 258,932.6 հազ.դրամ, որից նախարարության <<պահպանման ծախսեր>> հոդվածներով նախատեսվել է իրականացնել 146,138.2 հազ. դրամի ծախսր և 112,794.4 հազ. դրամ՝ <<ծրագրային>> ֆինանսավորում:

Հաշվետու ժամանակահատվածի համար <<պահպանման ծախսեր>> հոդվածների մասով իրականացվել է 17 գնման գործընթաց 120,268.1 հազ. դրամ ընդհանուր գումարով կամ նախատեսվածի 82.3%: Բոլոր մրցույթները կայացել են:

<<Ծրագրային>> հոդվածների մասով իրականացվել է 7 գնման գործընթաց, որից կայացել է 6-ը՝ 16,424.8 հազ. դրամ գումարով կամ 14.6%:

Կենտրոնացված կարգով էլեկտրոնային եղանակով ՊՈԱԿ-ների կարիքների համար (սննդամթերք, տնտեսական, սանհիգենիկ և մաքրիչ նյութեր, հանդերձանք և անկողնային պարագաներ, ծխախոտ և վառելիք) հայտարարված 69 գնման գործընթացի արդյունքում կնքվել է 1,082.641.0 հազ. դրամի պայմանագրեր:

4. ԱՆՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԽԵՂԱԹՅՈՒՐՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՐԱՌՈՒՄՆԵՐ

Վերլուծվել է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից 2020 թվականի առաջին եռամսյակի պետական բյուջեի ելքային ծրագրերի և միջոցառումների գծով արդյունքային ցուցանիշների կատարման վերաբերյալ տվյալները: Արդյունքում արձանագրվել է, որ ծրագրային միջոցառումների ճնշող մեծամասնությունում դրամարկղային ծախսի մասով առկա է ճշտված պլանի նկատմամբ թերակատարումներ: Դրանց գերակշռող մասում թերակատարումները առկա է նաև փաստացի ծախսի ցուցանիշը հաշվի առնելով: Միևնույն ժամանակ փաստացի ծախսի մասով ճշտված պլանի նկատմամբ որոշ դեպքերում առկա է նաև գերակատարումներ: Հիմնականում որպես թերակատարման պատճառ նշվել է ՀՀ տարածքում համավարակի /COVID-19/ հետևանքով առաջացած դժվարությունները, եռամսյակում շահառուների թվաքանակի պակաս լինելը, որոշ ծախսային հոդվածներով փաստացի պակաս ծախս կատարելու, գնման ընթացակարգերի (մրցույթների) պլանավորված ժամանակին չկայանալու կամ չամփոփվելու և համապատասխան պայմանագրերը ուշ կնքելու, ինչպես նաև որոշ դեպքերում հայտերը /կատարողականները/ եռամսյակի ավարտից հետո՝ սահմանված ժամկետում չներկայացնելու հանգամանքը: Սակայն հարկ է նշել, որ մի շարք դեպքերում նախարարության կողմից ՀՀ ֆինանսների նախարարություն ներկայացված առաջին եռամսյակի Ձև-2 հաշվետվությամբ նշված փաստացի ծախսերում չի արտացոլվել որոշ միջոցառումների մասով առաջին եռամսյակի տարբեր ամիսներին կատարված աշխատանքների վերաբերյալ հայտերի /կատարողականների/ գումարները, ինչը որևէ ձևով չի կարող հիմնավորվել վերը նշված պատճառաբանությամբ: Այսինքն, ՀՀ ֆինանսների նախարարություն ներկայացված որոշ միջոցառումների մասով Ձև-2 հաշվետվությամբ նշված փաստացի ծախսերի ցուցանիշը չի համապատասխանում առաջին եռամսյակում փաստացի կատարված աշխատանքներին: Մասնավորապես. թվով 18 դեպքում

86,500,18 հազ. դրամի չափով /1. 1110-12001 ծր.՝ 30.0 հազ. դրամ, 2. 1011-11002 ծր.՝ 1,015.12 հազ. դրամ, 3. 1141-12002 ծր.՝ 1,172.6 հազ. դրամ, 4. 1160-11006 ծր.՝ 2,361.89 հազ. դրամ, 5. 1032-11002 ծր.՝ 5,229.15 հազ. դրամ, 6. 1032-11003 ծր.՝ 880.0 հազ.դրամ, 7. 1032-11010 ծր.՝ 576.1 հազ. դրամ, 8. 1032-11011 ծր.՝ 563.0 հազ. դրամ, 9. 1141-11015 ծր.՝ 557.0 հազ. դրամ, 10. 1141-11016 ծր.՝ 1,169.36 հազ. դրամ, 11. 1160-11007 ծր.՝ 1,626.4 հազ. դրամ, 12. 1160-11009 ծր.՝ 801.3 հազ. դրամ, 13. 1088-12009 ծր.՝ 34,451.25 հազ. դրամ, 14. 1088-12010 ծր.՝ 3,473.88 հազ. դրամ, 15. 1141-11018 ծր.՝ 18,791.16 հազ. դրամ, 16. 1088-12002 ծր.՝ 1,167.52 հազ. դրամ, 17. 1088-12003 ծր.՝ 1,632.0 հազ. դրամ, 18. 1088-12004 ծր.՝ 11,002.36 հազ.դրամ/ աշխատանքներ է կատարված առաջին եռամսյակի տարբեր ամիսներին և սահմանված ժամանակահատվածի ընթացքում հայտ /կատարողական/ է ներկայացված նախարարություն, մինչդեռ դրանք չեն ներառվել ՀՀ ֆինանսների նախարարություն ներկայացված առաջին եռամսյակի Ձև-2 հաշվետվությամբ նշված փաստացի ծախսերում: Ընդ որում, այս պարագայում նույն չափով էլ կառաջանար կրեդիտորական պարտավորություններ: Հարկ է նշել, որ ՀՀ ֆինանսների նախարարության 13.03.2019 թվականի թիվ 254-ն հրամանի «օրինակելի ձև Հ-2 լրացման պահանջներ» գլխի 9-րդ կետի համաձայն «Հիմնարկի կատարած բյուջետային ծախսերի և բյուջետային պարտքերի մասին» աղյուսակի «ԺԱ» սյունակում լրացվում են հաշվետու ժամանակահատվածում հիմնարկի՝ համապատասխան փաստաթղթերով ձևակերպված իրական ծախսերը, ներառյալ կրեդիտորների չվճարված հաշիվները, հաշվարկված աշխատավարձի ու կրթաթոշակների գծով կատարված ծախսերը:

Միևնույն ժամանակ ՀՀ ֆինանսների նախարարի 13.03.2019 թվականի թիվ 254-Ն հրամանի՝

- «Ընդհանուր դրույթներ» գլխի 2-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն «Հաշվետու ժամանակահատված է համարվում տվյալ ֆինանսական տարվա այն ժամանակահատվածը, որի ընթացքում իրականացված գործառույթների վերաբերյալ կամ որի ավարտի դրությամբ ներկայացվում է հաշվետվությունը»:
- «Հաշվետվությունների կազմն ու բովանդակությունը» մասի 5-րդ կետի համաձայն «Հաշվետվության թվային մասն արտացոլում է հաշվետու ժամանակահատվածի ավարտի դրությամբ, տվյալ ժամանակահատվածի կտրվածքով, համապատասխան բյուջեների կատարման, ինչպես նաև հիմնարկների ֆինանսական գործունեության վերաբերյալ թվային ցուցանիշները»:
- «Հաշվետվությունների ամփոփումն ու ներկայացումը» մասի 14-րդ կետի համաձայն «Տարաժամկետ հաշվետվությունները ներկայացվում են շաբաթական, ամսական, եռամսյակային և (կամ) տարեկան պարբերականությամբ, և դրանցում արտացոլվում է հաշվետու մարմնի կողմից հաշվետու ժամանակահատվածի ընթացքում իրականացված որոշակի գործառույթների կամ վերջինիս տրամադրության տակ

գտնվող որոշակի ակտիվների և (կամ) պարտավորությունների շարժի մասին տեղեկատվությունը»:

Համաձայն «Գանձապետական համակարգի մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի «Պետական մարմնի գլխավոր ֆինանսիստը, սահմանված կարգով պետական հիմնարկներից ստանալով հաշվետվությունները, ամփոփում է դրանք և լիազոր մարմնի սահմանած կարգով ներկայացնում է վերջինիս:

Պետական հիմնարկներից ստացված հաշվետվություններից բացի, գլխավոր ֆինանսիստն ապահովում է նաև պետական մարմնի կողմից իրականացվող միջոցառումների և ծրագրերի կատարման մասին հաշվետվությունների ամփոփումը և լիազոր մարմին ներկայացնելը:

Գլխավոր ֆինանսիստը հաշվետվության հետ միասին լիազոր մարմին է ներկայացնում նաև հաշվետվության մանրամասն վերլուծությունը՝ ծրագրի համեմատ շեղումների պատճառների բացահայտմամբ»:

Այսպիսով, առկա է անհամապատասխանություն «Գանձապետական համակարգի մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի և ՀՀ ֆինանսների նախարարի 13.03.2019 թվականի թիվ 254-ն հրամանի վերը նշված կետերով սահմանված պահանջների հետ, ինչը հիմք է տալիս արձանագրելու, որ հաշվետու ժամանակահատվածի ընթացքում «իրականացված գործառույթները», «ակտիվների և շարժի մասին տեղեկատվությունը», «համապատասխան բյուջեների կատարման, ինչպես նաև հիմնարկների ֆինանսական գործունեության վերաբերյալ թվային ցուցանիշները», մասնավորապես առաջին եռամսյակի տարբեր ամիսներին կատարված աշխատանքներ թվով 18 միջոցառումների մասով 86,500,18 հազ. դրամի չափով, ՀՀ ֆինանսների նախարարի թիվ 254-Ն հրամանով սահմանված «Հիմնարկի կատարած բյուջետային ծախսերի և բյուջետային պարտքերի մասին» նախարարության կողմից ՀՀ ֆինանսների նախարարություն ներկայացված ձև Հ-2 հաշվետվություններում չի ներառվել: Միևնույն ժամանակ դրա հետ կապված «Հիմնարկի դեբիտորական, կրեդիտորական պարտքերի և պահեստավորված միջոցների մասին» հաշվետվություններում չի ներառվել առաջին եռամսյակի տարբեր ամիսներին գոյացած կրեդիտորական պարտքերը՝ նույն 86,500,18 հազ. դրամի չափով:

Վերլուծելով փաստացի ծախսերի և հաշվետու ժամանակաշրջանի ճշտված պլանի ցուցանիշների հարաբերակցությունը պարզվեց, որ մի շարք ծրագրային միջոցառումների դեպքերում առկա է նաև գերակատարումներ: Ընդ որում կատարողականների ցուցանիշները որպես կանոն հաշվարկվում են հիմք ընդունելով դրամարկղային ծախսի ցուցանիշը: Սակայն եթե հաշվի առնենք փաստացի ծախսի ցուցանիշը, որը իրենից ներկայացնում է հաշվետու ժամանակաշրջանում փաստացի կատարված աշխատանքները, ապա փաստացի ծախսի և

ճշտված պլանի ցուցանիշների հարաբերակցությունը կարտահայտի հաշվետու ժամանակաշրջանում կատարված աշխատանքների փաստացի կատարողականը: Մասնավորապես թվով 7 ծրագրային միջոցառումների դեպքում առկա է ճշտված պլանի նկատմամբ հաշվետու ժամանակաշրջանում իրականացված փաստացի ծախսերի գերակատարում: Ընդ որում դրանցից 2 դեպքում առկա է փաստացի կատարված աշխատանքներ, որոնք հաշվետվություններում նշված փաստացի ծախսերի ցուցանիշներում ընդգրկված չեն: Այսպես օրինակ.

1. 1011-11002 ծր.՝ ճշտված պլանը կազմել է 100,852.4 հազ. դրամ, փաստացի ծախսը՝ 142,874.2 հազ. դրամ, կատարողականը կկազմի 141.7%:
2. 1015-12001 ծր.՝ ճշտված պլանը կազմել է 31,246.1 հազ. դրամ, փաստացի ծախսը՝ 34,196.0 հազ. դրամ, կատարողականը՝ 109.4%:
3. 1117-11001 ծր.՝ ճշտված պլանը կազմել է 517,954.3 հազ. դրամ, փաստացի ծախսը՝ 588,701.23 հազ. դրամ, կատարողականը կկազմի՝ 113.6%:
4. 1032-11005 ծր.՝ ճշտված պլանը կազմել է 12,131.9 հազ. դրամ, փաստացի ծախսը՝ 14,904.9 հազ. դրամ, կատարողականը կկազմի՝ 122.0%:
5. 1160-11009 ծր.՝ ճշտված պլանը կազմել է 1,236.2 հազ. դրամ, փաստացի ծախսը՝ 1,613.8 հազ. դրամ, կատարողականը կկազմի՝ 130.5%, իսկ եթե հաշվի առնենք այն, որ հաշվետու ժամանակահատվածում կատարված 801.3 հազ. դրամ աշխատանքը հաշվետվության փաստացի ծախսի ցուցանիշում չի ներառվել, ապա կատարողականը կկազմի՝ /1,613.8+801.3/:1,236.2=195,3%:
6. 1088-12003 ծր.՝ ճշտված պլանը կազմել է 5,500.0 հազ. դրամ, փաստացի ծախսը՝ 4,747.6 հազ. դրամ, իսկ եթե հաշվի առնենք այն, որ հաշվետու ժամանակահատվածում կատարված 1,632.0 հազ. դրամ աշխատանքը հաշվետվության փաստացի ծախսի ցուցանիշում չի ներառվել, ապա կատարողականը կկազմի՝ /4,747.6+1,632.0/:5,500.0=116,0%:
7. 1141-11005 ծր.՝ ճշտված պլանը կազմել է 32,578.1 հազ. դրամ, փաստացի ծախսը՝ 35,839.5 հազ. դրամ, կատարողականը կկազմի՝ 110.0% :

Անհամապատասխանության վերաբերյալ գրառումները ներկայացվում է կից հավելվածով՝ բյուջետային ծրագրերի աղյուսակի տեսքով: Միևնույն ժամանակ ստորև ներկայացվում է վերոնշյալ անհամապատասխանությունների վերաբերյալ արձանագրվածի էությունը բնորոշող օրինակներ:

Մասնավորապես.

- Ծրագիր 1032-11003, <<Տարեցներին, հաշմանդամություն ունեցող անձանց ցերեկային խնամքի ծառայություններ>>-2020թ. հաշվետու ժամանակահատվածի համար պլանավորվել է 40,733.6 հազ. դրամ: Համաձայն հաշվետվություն ձև Հ-2 -ի

դրամարկղային ծախսը կազմել ՝22,942.2 հազ. դրամ, փաստացի ծախսը կազմել է 34,087 հազ. դրամ, համաձայն դեբիտորական և կրեդիտորական պարտքերի հաշվետվություն ձև Հ-4-ի կրեդիտորական պարտքը կազմել է 11,145.3 հազ. դրամ: Շահառուների թիվը 2020թ. Հաշվետու ժամանակահատվածի ամսական– պլան՝ 1845 . փաստ՝ 1463, Նախարարությունից ստացված տեղեկատվության համաձայն հունվար- 1078, փետրվար - 1524, մարտ - 1673, կամ շահառուների միջին ամսական 1532 կամ 69-ով ավել:

2020թ. Ցերեկային խնամքի ծառայությունների մատուցման համար կնքվել են պայմանագրեր 1777 անձի համար, որից <<Առաքելություն Հայաստան>> Հ/Կ-ի, <<Հայկական Կարիտաս>> Հ/Կ հետ պայմանագրերը կնքվել է հունվարի 30-ին, ծառայությունները մատուցվել են ամբողջ հունվար ամիսը ներառյալ: <<Խնամք>> ՀԿ-ի հետ փետրվարին և <<Տարեցների առողջության և խնամքի ապահովման>> ասոցիացիայի հետ՝ մարտին, որոնք ծառայություններ են մատուցել միայն մարտ ամսին/: 2019 թվականի նոյեմբերի 7-ին նախարարության կողմից հայտարարվել էր դրամաշնորհի տրամադրման մրցույթ, որը կայացել 07.12.2019թ.-ին: Չկայացած մրցույթները վերահայտարարվել են 20.11.2019թ.-ին, իսկ մրցույթը կայացել է 24.12.2019թ.-ին: Այսպիսով, սույն միջոցառման համար 1-ին եռամսյակում փաստացի ծառայություն են ստացել տարեց և հաշմանդամություն ունեցող միջին հաշվով 1463 անձ:

Թերակատարման պատճառը հանդիսանում է այն, որ դրամաշնորհի մրցույթում կազմակերպությունները հաղթել են փետրվար-մարտ ամիսներին և ոչ բոլոր դեպքերում է ծառայությունը մատուցվել հաշվետու ժամանակաշրջանի բոլոր ամիսներին:

Փաստացի ծախսի մեջ չի ներառվել հաշվետու ժամանակահատվածում մարտ ամսվա կատարողականը 880,0 հազ. դրամի չափով: Արդյունքում՝ հաշվետվության ծախսի գումարը չի արտացոլում առաջին եռամսյակում կատարված աշխատանքների իրական պատկերը: Հաշվի առնելով ձև 2 հաշվետվության փաստացի ծախսի գումարը առաջին եռամսյակում՝ ճշտված պլանի նկատմամբ կատարողականը կկազմի 83,7% հաշվետվությունում նշված 56.3 %-ի փոխարեն :

- Ծրագիր 1032-11002, <<Տարեցներին և հաշմանդամություն ունեցող անձանց տնային պայմաններում խնամքի ծառայություններ>>- 2020թ. հաշվետու ժամանակահատվածի համար պլանավորվել է 42,764, հազ. դրամ: Համաձայն հաշվետվություն ձև Հ-2 -ի դրամարկղային ծախսը կազմել՝ 23,082.63 հազ. դրամ, փաստացի ծախսը կազմել է 31,339.9 հազ. դրամ, համաձայն դեբիտորական և կրեդիտորական պարտքերի հաշվետվություն ձև Հ-4-ի կրեդիտորական պարտքը կազմել է 8,257.3 հազ. դրամ:

Շահառուների թիվը 2020 թ. Հաշվետու ժամանակահատվածի ամսական պլան՝ 3260, փաստ՝ 3006: Նախարարությունից ստացված տեղեկատվության համաձայն հունվար- 2661, փետրվար - 2913, մարտ - 3072, կամ շահառուների միջին ամսական 2882 կամ 124-ով պակաս:

2020 թ. Տնային սպասարկման ծառայությունների մատուցման համար կնքվել են պայմանագրեր 3337 շահառուների համար, հունվար ամսին թվով 3 կազմակերպության հետ, որոնք մատուցել են ծառայություն ամբողջ հունվար ամիսը ներառյալ: <<Հայկական կարմիր խաչի ընկերության>>, <<Արմավիրի զարգացման կենտրոն>> Հ/Կ-ների հետ պայմանագիրը կնքվել է հունվարի 30-ին , Հ.Ք.Կոֆոեդ ԲՀ-ի հետ՝ փետրվար ամսին, իսկ ծառայությունները մատուցվել են փետրվար ամսից, <<Տարեցների առողջության և խնամքի ապահովման>> ասոցիացիայի հետ պայմանագրերը կնքվել են մարտ ամսին, իսկ ծառայություն մատուցել է միայն մարտ ամսին: Այսպիսով, սույն միջոցառման համար 1-ին եռամսյակում փաստացի ծառայություն են ստացել 3006 տարեց և հաշմանդամություն ունեցող անձ: Թերակատարման պատճառը հանդիսանում է այն, որ դրամաշնորհի մրցույթում կազմակերպությունները հաղթել են հունվար ամսին, իսկ ծառայությունները մատուցել են փետրվար ամսին, հետևաբար փաստացի ծառայությունները ստացել են 1-ին եռամսյակի ընթացքում միջին հաշվով 3006 անձ: Տարեցներին և հաշմանդամություն ունեցող անձանց տնային պայմաններում խնամքի ծառայություններ մատուցելու համար, 2020թ. Երևան քաղաքում ամեն վարչական շրջան սպասարկելու համար շահել են հասարակական կազմակերպություններ, իսկ Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանը տրվել է <<Տնային պայմաններում միայնակ տարեցների և հաշմանդամների սոց. սպասարկման կենտրոն>> ՊՈԱԿ-ին, քանի որ վերջինս տեղակայված է այդ վարչական շրջանում: 2019 թվականի նոյեմբերի 5-ին ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից հայտարարվել էր դրամաշնորհի տրամադրման մրցույթ: Չկայացած մրցույները վերահայտարարվել են Հունվարին, Փետրվարին: Շահառուների պլանային թվի և պայմանագրային թվի տարբերությունը պայմանավորված է մրցույթի արդյունքում կազմակերպության կողմից առաջարկված շահառուների թվով, որը լրացուցիչ ֆինանսական պարտավորություններ չի առաջացրել: Մրցույթը կայացել է 07.12.2019թ.-ին թվով 3 Հ/Կ-ների հետ պայմանագեր են կնքվել 2020թ. հունվարի 30-ին, սակայն ծառայությունները մատուցելու էին հունվարի 1-ից, իսկ մեկի՝ Հ.Ք.Կոֆոեդ ԲՀ-ի հետ էլ կնքել են փետրվարի 10-ին: Փետրվարի 24- ին կայացած մրցույթում հաղթող Հ/Կ-ի հետ մարտի 23-ին կնքել են պայմանագիր: Փաստացի ծախսի մեջ չի ներառվել հաշվետու ժամանակահատվածում կատարված աշխատանքները 5,229.15 հազ. դրամի չափով,

որից մարտ ամսվա կատարողական 5,229.15 հազ. դրամ: Արդյունքում՝ հաշվետվության ծախսի գումարը չի արտացոլվում առաջին եռամսյակում կատարված աշխատանքների իրական պատկերում: Հաշվի առնելով ձև 2 հաշվետվության փաստացի ծախսի գումարը առաջին եռամսյակում՝ ճշտված պլանի նկատմամաբ կատարողականը կկազմի 73,3% հաշվետվությունում նշված 54,0%-ի փոխարեն:

- Ծրագիր 1011-11002, <<Համայնքային ենթակայության սոցիալական ծառայությունների կողմից սոցիալական աջակցության քաղաքականության իրականացման ապահովում>> 2020թ. հաշվետու ժամանակահատվածի համար ՍԱՏԿ- ների պահպանման ծախսերը պլանավորվել է 100,852.4 հազ.դրամ: Համաձայն հաշվետվություն ձև-2-ի դրամարկղային ծախսը կազմել է 28,460.0 հազ. դրամ, փաստացի ծախսը կազմել է 142,874.2 հազ. դրամ /հունվար՝ 8,980.3 հազ. դրամ, փետրվար՝ 91,872.1 հազ. դրամ և մարտ՝ 42,021.8 հազ. դրամ/: Երևանի քաղաքապետարանի կողմից սոցիալական աջակցության տարածքային կենտրոնների առաջին եռամսյակի (հունվար,փետրվար) համար նախատեսված միջոցների հայտերը ներկայացվել են՝ համաձայն <<Մալբրի>> համակարգով արտացոլված տվյալների մուտքագրվել է 27.03.20թ: Վճարման է տրվել 02.04.20թ՝ 72,392.4 հազ. դրամ գումարով: Հաշվի առնելով ձև 2 հաշվետվության փաստացի ծախսի գումարը՝ առաջին եռամսյակում, ճշտված պլանի նկատմամաբ կատարողականը կկազմի 141.7 % հաշվետվությունում նշված 28,2 %-ի փոխարեն:
- Ծրագիր 1141-11005, <<Երեխաների գիշերօթիկ խնամքի ծառայություններ>>-2020թ. հաշվետու ժամանակահատվածի համար պլանավորվել է 32,578,1 հազ. դրամ: Համաձայն հաշվետվություն ձև Հ-2 -ի դրամարկղային ծախսը կազմել ՝ 19,965,0 հազ. դրամ, փաստացի ծախսը կազմել է 35,839,5 հազ. դրամ, համաձայն դեբիտորական և կրեդիտորական պարտքերի հաշվետվություն ձև Հ-4-ի դեբիտորական պարտքը տարեսկզբին կազմել է 13,528,6 հազ. դրամ, իսկ տարեվերջին՝ 5,869,3 հազ. դրամ, կրեդիտորական պարտքը կազմել է 8,215,2 հազ. դրամ : Շահառուների ընդհանուր թիվը հաշվետու ժամանակահատվածի ամսական պլանով կազմել է՝ Պլան՝ 90, փաստ՝ հունվար - 83, փետրվար - 83 և մարտ - 83: Հաշվի առնելով ձև 2 հաշվետվության փաստացի ծախսի գումարը առաջին եռամսյակում՝ ճշտված պլանի նկատմամբ կատարողականը կկազմի 110% հաշվետվությունում նշված 61.3%-ի փոխարեն:
- Ծրագիր 1032-11005, <<Անօթևան մարդկանց համար ժամանակավոր օթևանի տրամադրման ծառայություններ>>-2020թ. հաշվետու ժամանակահատվածի համար պլանավորվել է 12,131.9, հազ. դրամ: Համաձայն հաշվետվություն ձև Հ-2 -ի դրամարկղային ծախսը կազմել ՝9,904.9 հազ. դրամ, փաստացի ծախսը կազմել է 14,904.9 հազ. դրամ, համաձայն դեբիտորական և կրեդիտորական պարտքերի

հաշվետվություն ձև Հ-4-ի կրեդիտորական պարտքը կազմել է 5,000.0 հազ. դրամ: Շահառուների թիվը 2020թ. Հաշվետու ժամանակահատվածի ամսական պլան՝ 100 փաստացի ՝ 100, հունվար-100, փետրվար-100, մարտ-100:

Հունվար ամսին «Հանս Քրիստիան Կոֆոեդ» Բ/Հ/ հետ կնքվել է պայմանագիր մեկ ամսվա համար, իսկ փետրվար-մարտ ամիսներին հաղթել է մրցույթում 3 լոտով՝ 30, 30, 40 անձի հանար: 10.02.2020թ.-ին կնքվել է պայմանագիր 3 լոտի համար 11 ամիսների համար (53,954,4 հազ. դրամ), իսկ հունվար ամսվա համար ՀՀ կառավարության 27.02.2020թ. թիվ 225-Ն որոշմամբ (4,904.9 հազ. դրամ) - /պայմանագիրը կնքվել է 10.03.2020թ/: Փաստացի թվի և հաշվետու ժամանակահատվածի պլանավորված թվի՝ 2,773,0 հազ. դրամի տարբերությունը ոչ իրատեսական պլանավորման արդյունք է:

Սույն միջոցառման գծով թերակատարում չի եղել /Պլան՝ 100 մարդ – Փաստ՝ 100/ Հաշվի առնելով ձև 2 հաշվետվության փաստացի ծախսի գումարը առաջին եռամսյակում՝ ճշտված պլանի նկատմամբ կատարողականը կկազմի 122% հաշվետվությունում նշված 81.6%-ի փոխարեն:

- Ծրագիր 1088-12009, <<Մինչև երեք տարեկան երեխայի խնամքի արձակուրդում գտնվող անձանց, երեխայի մինչև երկու տարին լրանալը աշխատանքի վերադառնալու դեպքում, երեխայի խնամքն աշխատանքին զուգահեռ կազմակերպելու համար աջակցության տրամադրում>>- Մարտի ֆինանսավորման հայտերը և կատարողականները ներկայացվում են ապրիլ ամսին, ուստի այդ մասով ֆինասավորումը չի ընդգրկվել հաշվետու ժամանակաշրջանի ցուցանիշներում: Ճշտված պլանով նախատեսվել է սպասարկել 250 շահառու, փաստացին կազմել է 195 շահառու, տևողությունը՝ 2 տարի: Հաշվետու ժամանակաշրջանի ճշտված պլանը կազմել է 100,000.0 հազ. դրամ: Հաշվետվություն ձև 2-ում 1 եռամսյակի դրամարկղային և փաստացի ծախսերը համընկնում են՝ 60,746.9 հազ. դրամ: Փաստացի ծախսը իր մեջ պետք է պարունակի հունվար, փետրվար և մարտ ամիսների կատարողականները:Հաշվի առնելով այն հանգամանքը, որ պետբյուջեի կատարողականի հաշվետվությունում որպես թերակատարման պատճառ նշվել է, որ փաստացի ծախսված ֆինանսական միջոցները ներառում են միայն հունվար, փետրվար ամիսների գումարը, ապա նշված թվերի նույն լինելը ցույց է տալիս, որ մարտ ամսվա կատարողականը չի ընդգրկվել ձև 2-ի փաստացի կատարողականում: Այսինքն հաշվետվություն ձև 2-ում նշված փաստացի ծախսի գումարը չի արտացոլում հաշվետու ժամանակաշրջանում կատարված աշխատանքների իրական ծավալը: Մարտ ամսվա կատարողականի ֆինանսավորման հայտը գործակալության հաշվապահությունը ստացել է 07.04.2020թ.-ին՝ 34,451.25 հազ. դրամի չափով: Եթե դիտարկենք եռամսյակի ընդհանուր կատարողականը հաշվի առնելով մարտ ամսվա

կատարողականի ֆինանսավորման հայտի գումարը՝ 34,451.25 հազ. դրամի չափով, ապա ճշտված պլանի նկատմամբ կատարման ցուցանիշը կկազմի 95.2% /60,746.9+34,451.25/:100,000.0*100/, հաշվետվությունում նշված 60.7%-ի փոխարեն:

- Ծրագիր 1141-11018, <<Երեխաների խնամքի ցերեկային ծառայությունների տրամադրում>>-Որոշ մրցույթներ դեկտեմբերին չեն կայացել, կատարողները հանդիսանում են հավատարմագրված ՀԿ-ները, որոնք ընտրվում են մրցութային կարգով, /գնումների հաշվետվություններում նշված է, որպես գնում չհանդիսացող պայմանագրեր/: Կան պայմանագրեր կնքված փետրվար ամսին: Ճշտված պլանը կազմել է 48,628.4 հազ. դրամ, համաձայն հաշվետվություն ձև Հ-2-ի դրամարկղային ծախսը՝ 20,381.94 հազ. դրամ, փաստացի ծախսը կազմել է 20,515.6 հազ. դրամ, հաշվետվություն ձև Հ-4 նշված կրեդիտորական պարտք՝ 133.9 հազ. դրամ: Եթե դիտարկենք եռամսյակի ընդհանուր կատարողականը հաշվի առնելով հաշվետվություն ձև Հ- 2-ի փաստացի ծախսի ցուցանիշը՝ 20,515.6 հազ. դրամ, ապա ճշտված պլանի նկատմամբ կատարման ցուցանիշը կկազմի 42.2% /20,515.6/48,628.4*100/ հաշվետվությունում նշված 41.9%-ի փոխարեն: Կատարողականները հաջորդող ամիսին թերի են ներկայացվում, մինչև ճշգրտվելը եռամսյակի հաշվետվությունները կազմվում են և վերջինս չի արտացոլվում եռամսյա հաշվետվությունների մեջ: Այսինքն հաշվետվություն ձև 2-ում նշված փաստացի ծախսի գումարը չի արտացոլում հաշվետու ժամանակաշրջանում կատարված աշխատանքների իրական ծավալը: Մասնավորապես, համաձայն նախարարության գլխավոր հաշվապահի կողմից ներկայացված տեղեկատվության, փետրվար և մարտ ամիսների կատարողականների գումարը՝ 18,791.16 հազ դրամի չափով չի ընդգրկվել հաշվետվություն ձև Հ-2-ի փաստացի ծախսի ցուցանիշում՝ այն ըստ հաշվետվության կազմել է 20,515.6 հազ. դրամ: Ըստ ճշտված պլանի շահառուների թիվը եռամսյակի համար կազմել է 3277, փաստացին՝ 1390, սոցիալական հոգածության ցերեկային կենտրոնների թիվը՝ 27, փաստացին՝ 20, երեխաների սոցիալական զարգացման անհատական ծրագրերով ապահովվածությունը՝ 100 տոկոս, փաստացին 100 տոկոս, երեխաների խնամքի շուրջօրյա հաստատությունների մուտքը կանխարգելված երեխաները՝ ցերեկային խնամքի հաստատության երեխաների թվաքանակում՝ 30 տոկոս, փաստացին՝ 30 տոկոս, ծառայության տևողությունը 12 ամիս, փաստացին՝ 12 ամիս:
- Մի շարք միջոցառումների գծով եռամսյակային պլանավորում չի իրականացվել և աշխատանքներ չի իրականացվել աշխատանքների սեզոնային լինելու հանգամանքով, մինչդեռ առկա է դեպք, երբ հաշվետու ժամանակաշրջանում կատարվել է աշխատանք և ապրիլ ամսին հայտ /կատարողական/ է ներկայացվել նախարարություն, սակայն այն

չի ընդգրկվել առաջին եռամսյակի Ձև Հ-2 հաշվետվության փաստացի ծախսերի մեջ: Օրինակ՝

Ծրագիր 1088-12006, <<Սեզոնային զբաղվածության խթանման միջոցով գյուղացիական տնտեսությանն աջակցության տրամադրում>> Հաշվետու ժամանակաշրջանի համար պլանավորում չի կատարվել, քանի որ աշխատանքը սեզոնային է: Ըստ գործակալության էլեկտրոնային տեղեկանքի 07.04.2020թ.-ին ներկայացվել է մարտ ամսվա համար 2,536.36 հազ. դրամի ֆինանսավորման հայտ, որը չի ընդգրկվել առաջին եռամսյակի Ձև Հ-2 հաշվետվության փաստացի ծախսերի մեջ: Նշված հաշվետվության մեջ ընգրկվելու դեպքում նույն չափով կառաջանար կրեդիտորական պարտք: Շահառուների փաստացի քանակը կազմել է 130:

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության առաջին եռամսյակի ելքային ծրագրերի և միջոցառումների գծով ծախսերի ցուցանիշները և դրանց յուրաքանչյուրի մասով կատարողականների վերաբերյալ ամբողջական տվյալները և անհամապատասխանությունների վերաբերյալ նկատառումները ըստ բյուջետային ծրագրերի ներկայացված է կից հավելվածում:

5. ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏԻ ՂԵԿԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԲԱՑԱՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Թիվ 1. Հաշվեքննության արձանագրության՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2020թ. առաջին եռամսյակի ծախսերի կատարողականների վերաբերյալ 1-ին հավելվածի՝ 1015-12001 «Պետական հիմնարկների և կազմակերպությունների աշխատողների սոցիալական փաթեթով ապահովում» միջոցառման գծով «Հաշվեքննողի կողմից ճշտված տվյալներ» սյունակում «, իսկ փաստացի ծախսը 34,196.0 հազ. դրամ (1900 շահառու), այդ թվում՝ մարտ ամիսը հաշվի առնելով Ձև 2 հաշվետվության փաստացի գումարը՝ առաջին եռամսյակում, ճշտված պլանի նկատմամբ կատարողականը կկազմի 109,4 %» բառերը հանել հիմք ընդունելով հետևյալը.

Սոցիալական փաթեթի հատկացման կարգով սոցիալական փաթեթի գումարների հերթական (ամենամսյա) փոխանցումներն իրականացվում են մինչև հաջորդ ամսվա 5-րդ աշխատանքային օրը (Կառավարության 27.12.2012թ.-ի N 1691-Ն որոշման 1-ին հավելվածի 8-րդ կետ): Հետևաբար յուրաքանչյուր տարվա սոցիալական փաթեթների մարտ ամսվա միջոցները շահառուներին փոխանցվում են ոչ թե առաջին եռամսյակում, այլ երկրորդ

եռամսյակում՝ մինչև ապրիլ ամսվա 5-րդ աշխատանքային օրը: Այդ տրամաբանությամբ էլ 1015-12001 միջոցառման համար տարեկան 10,619,496.0 հազ. դրամից շուրջ 147493 շահառուի համար 2020 թ. առաջին եռամսյակում նախատեսվել է 1,769,916.0 հազ դրամ գումար, որը նախատեսում է միայն հունվար և փետրվար ամիսների համար սոցիալական փաթեթի միջոցների հատկացումներ, հաջորդիվ՝ մարտ-մայիս ամիսների գումարները նախատեսված են երկրորդ եռամսյակում, հունիս-օգոստոս ամիսներինը՝ երրորդ եռամսյակում, իսկ սեպտեմբեր-դեկտեմբեր ամիսներինը՝ չորրորդ եռամսյակում: Այս առումով հարկ է նշել նաև, որ սոցիալական փաթեթի հատկացման կարգով դեկտեմբեր ամսվա սոցիալական փաթեթի գումարը փոխանցվում է մինչև ընթացիկ բյուջետային տարվա դեկտեմբերի 20-ը (Կառավարության 27.12.2012 N 1691-Ն որոշման 1-ին հավելվածի 8-րդ կետ), այսինքն՝ այս դեպքում նշված միջոցառման գծով բոլոր միջոցառման կատարողների համար չորրորդ եռամսյակում նախատեսված են 4 ամսվա՝ սեպտեմբեր-դեկտեմբեր, կտրվածքով սոցիալական փաթեթի միջոցներ:

Վերոգրյալով է պայմանավորված նաև, աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության համար առաջին եռամսյակի կտրվածով 2604 շահառուի համար 31,246.1 հազ. դրամ ճշտված պլանի նախատեսումը, որը ներառում է միայն հունվար և փետրվար ամիսների համար պլանավորված սոցիալական փաթեթի միջոցների հատկացումները:

Տեղեկացնում ենք նաև, որ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2020 թ. առաջին եռամսյակի փաստացի ծախսը՝ ճշտված պլանի նկատմամբ կազմում է 6,784.9 հազ. դրամ, և տվյալ դեպքում, վերը նշվածը հաշվի առնելով, չեն կարող մարտ ամսվա համար նախատեսված սոցիալական փաթեթի միջոցները, որոնք պլանավորված են երկրորդ եռամսյակի համար և փաստացի ևս փոխանցվել են երկրորդ եռամսյակի (ապրիլ ամսվա) ընթացքում, ներկայացվել, որպես առաջին եռամսյակում կատարված փաստացի ծախս:

Հաշվեքննողների մեկնաբանությունները Թիվ 1.-ի վերաբերյալ

<u>Չի ընդունվել:</u> Հաշվեքննության արձանագրության՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2020 թ. առաջին եռամսյակի ծախսերի կատարողականների վերաբերյալ 1-ին հավելվածի՝ 1015-12001 «Պետական հիմնարկների և կազմակերպությունների աշխատողների սոցիալական փաթեթով ապահովում» միջոցառման գծով «Հաշվեքննողի կողմից ճշտված տվյալներ» սյունակում «, իսկ փաստացի ծախսը 34,196.0 հազ. դրամ (1900 շահառու), այդ թվում՝ մարտ ամիսը հաշվի առնելով Ձև 2 հաշվետվության փաստացի գումարը՝ առաջին եռամսյակում, ճշտված պլանի նկատմամբ կատարողականը կկազմի 109,4 %» բառերը հանելու առաջարկության վերաբերյալ նշենք, որ փաստացի ծախսի ցուցանիշը արտացոլված է նախարարության կողմից կազմված և ՀՀ ֆինանսների նախարարություն

ներկայացված Ձև 2 հաշվետվության մեջ և փաստացի կատարողականի %-ը հաշվարկվել է հիմք ընդունելով արդեն իսկ հաշվետվությամբ արտացոլված ցուցանիշը:

Թիվ 2. Արձանագրությամբ «Զբաղվածության ծրագիր» (1088) ծրագրի մասով Զբաղվածության պետական ծրագրերի ֆինանսավորման կարգերը հաստատված են ՀՀ Կառավարության 2014թ. ապրիլի 17-ի թիվ 534-Ն որոշմամբ և հաշվապահական հաշվառման քաղաքանությունն է իրականացնել ֆինանսավորումը՝ խստորեն պահպանելով ընթացակարգերը, յուրաքանչյուր առանձին ծրագրի յուրահատկություններով պայմանավորված:

Այն զբաղվածության ծրագրերը, որով շահառուներին վճարվում է աշխատավարձ, կրթաթոշակ, օժանդակություն և այլն, (12001, 12002, 12003, 12004, 12006, 12008, 12009, 12010, 12011, 12013) ամիսն ավարտվելուց հետո, հաջորդ ամսվա մեջ, հիմնվելով հաճախելիության թերթիկների և մշտադիտարկման արդյունքներից, տարածքային կենտրոնների կողմից կազմվում և ԶՊԳ ներկայացվում է ֆինանսավորման հայտ: Մարտ ամսվա համար հայտերը ստացվում են ապրիլ ամսվա մեջ, օրենսդրությամբ սահմանված ժամկետներում, ուստի չեն կարող արտացոլվել մարտ ամսվա փաստացի ծախսերում, այլ ներառվում են ապրիլ ամսվա ծախսերում:/ ՀՀ ՀՀՀՀՀՍ 2.44 կետ1/

Մոտեցումը հիմնված է ՀՀ ՀՀՀՀՀՍ-ի այն դրույթի հիման վրա, որ ծախսը ճանաչվում է, երբ այն կարող է արժանահավատորեն չափվել և կազմակերպությունը հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ ունի հստակ պարտականություն (2.44 կետ 1,3; 2.36; 2.45; 2.47; 3.4), հետևաբար, նշված դեպքերում ծախսի ճանաչումը չի բավարարվում:

Մյուս ծրագրերի դեպքում, ելնելով դրանց իրականացման և ֆինանսավորման առանձնահատկություններից (գնում, միանվագ վճարում և այլն), հայտը ներկայացվում է ընթացիկ ամսում և համապատասխանաբար այդ ամսում ճանաչվում որպես ծախս:

Խնդրում եմ հաշվի առնել զբաղվածության ծրագրերի առանձնահատկությունները:

Հայտնում եմ, որ ՀՀ ֆինանսների նախարարի 2019 թվականի մարտի 13-ի 254-Ն հրամանի պահանջների համաձայն ներկայացվող հաշվետվություններում, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության առաջին եռամսյակի հաշվետվությունների փաստացի կատարողականի տվյալներում ներառվել են մինչև ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության հաշվետվությունների ներկայացման ժամկետը՝ ապրիլի 20-ը տրամադրված կատարողականները, իսկ այն հաշվետվությունները, որոնք չեն ներառվել առաջին եռամսյակում, ընդգրկվում են հաջորդ եռամսյակում:

Հաշվեքննողների մեկնաբանությունները Թիվ 2.-ի վերաբերյալ

Չի ընդունվել: «Զբաղվածության ծրագիր» (1088) ծրագրի մասով Զբաղվածության պետական ծրագրերի ֆինանսավորման կարգերը հաստատված են ՀՀ Կառավարության 2014թ. թիվ 534-Ն որոշմամբ, որպես օրինակ մեջբերենք որոշման հավելված 23-ով սահմանված /1088-12009 ծրագիր/ «ՄԻՆՉԵՎ ԵՐԵՔ ՏԱՐԵԿԱՆ ԵՐԵԽԱՅԻ ԽՆԱՄՔԻ ԱՐՁԱԿՈՒՐԴՈՒՄ ԳՏՆՎՈՂ՝ ԱՇԽԱՏԱՆՔ ՓՆՏՐՈՂ ԱՆՁԱՆՑ՝ ՄԻՆՉԵՎ ԵՐԵԽԱՅԻ ԵՐԿՈՒ ՏԱՐԻՆ ԼՐԱՆԱԼՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՎԵՐԱԴԱՌՆԱԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ ԵՐԵԽԱՅԻ ԽՆԱՄՔՆ ԱՇԽԱՏԱՆՔԻՆ ՋՈՒԳԱՀԵՌ ԿԱՋՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ» կարգի 16, 17, 18 և 19-րդ կետերով սահմանված դրույթները՝

«16. Տարածքային կենտրոնները, մինչև յուրաքանչյուր ամսվան հաջորդող ամսվա երրորդ աշխատանքային օրը, գրասենյակ են ներկայացնում ծրագրի համար անհրաժեշտ միջոցների ֆինանսավորման մասին հայտ-պահանջագրերը՝ Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի (այսուհետ՝ նախարար) հաստատած ձևին համապատասխան:

(16-րդ կետը փոփ. 14.11.19 N 1616-Ն)

17. Գրասենյակը, ֆինանսավորման մասին հայտ-պահանջագրերը տարածքային կենտրոնների կողմից ստացվելուց հետո, կազմում և նախարարություն է ներկայացնում նախարարի հաստատած ձևին համապատասխան և ըստ տարածքային կենտրոնների ամփոփված՝ ծրագրի համար անհրաժեշտ միջոցների ֆինանսավորման հայտ-պահանջագիրը՝ ոչ ուշ, քան մինչև յուրաքանչյուր ամսվան հաջորդող ամսվա հինգերորդ աշխատանքային օրը:

(17-րդ կետը փոփ. 14.11.19 N 1616-Ն)

18. Նախարարությունը երեք աշխատանքային օրվա ընթացքում գրասենյակի կողմից ներկայացված հայտ-պահանջագիրը ներկայացնում է Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն՝ գրասենյակի անվամբ Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության գանձապետարանում բացված հաշվի համարին ֆինանսական միջոցների փոխանցման նպատակով:

(18-րդ կետը փոփ. 14.11.19 N 1616-Ն)

19. Սահմանված կարգով գումարն ստացվելուց հետո գրասենյակը հինգ աշխատանքային օրվա ընթացքում այն փոխանցում է շահառուի բանկային հաշվին»:

Նշենք, որ խոսքը վերաբերվում է ոչ թե դրամարկղային ծախսին, որը հաշվետվությունում ներառվում է հաշվետու ժամանակահատվածում վճարված գումարներին, այլ հաշվետու ժամանակահատվածում /հունվար, փետրվար և մարտ ամիսներ/ կատարված աշխատանքներին, որոնց վերաբերյալ հաշվետու ժամանակահատվածներում կատարված

աշխատանքների վերաբերյալ ոչ ուշ քան ապրիլ ամսվա սահմանված ժամանակահատվածում ներկայացվել է հայտ-պահանջագրեր, սակայն դրանք չեն ներառվել հաշվետու ժամանակաշրջանի համար կազմված և ՀՀ ֆինանսների նախարարություն ներկայացված Ձև 2 հաշվետվություններում: Մասնավորապես նշված 1088-12009 ծրագրի մասով 34,451,25 հազ. դրամի հայտ-պահանջագիրը՝ համաձայն ԶՊԳ-ի ներկայացված տեղեկանքի, ներկայացվել է 07.04.2020 թվականին, մինչդեռ այդ ցուցանիշը
20.04.2020թ –ին կազմված Ձև 2 հաշվետվության փաստացի ծախսերում չի ներառվել:

Իսկ ինչ վերաբերվում է ՀՀ ՀՀՀՀՍ-ի այն դրույթի հիման վրա մոտեցումներին, համաձայն որի ծախսը ճանաչվում է, երբ այն կարող է արժանահավատորեն չափվել և կազմակերպությունը հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ ունի հստակ պարտականություն (2.44 կետ 1,3; 2.36; 2.45; 2.47; 3.4), հետևաբար, նշված դեպքերում ծախսի ճանաչումը չի բավարարվում, նշենք, որ ծախսերի չճանաչման վերաբերյալ մեր կողմից նշված դեպքերի մասով որևէ կոնկրետ դեպք չի ներկայացվել:

Թիվ 3. Հաշվեքննիչ պալատի կից նյութի 4-րդ էջում Ծրագիր 1032-11003 միջոցառման անունը անհրաժեշտ ճշտել, պետք է լինի՝ «Տարեցներին, հաշմանդամություն ունեցող անձանց ցերեկային խնամքի ծառայություններ»:

Հաշվեքննողների մեկնաբանությունները Թիվ 3.-ի վերաբերյալ
Հաշվի է առնվել և կատարվել է ճշտում:

ՀՀ հաշվեքննիչ պալատի առաջին վարչության պետ՝ Ա.Սարգսյան

6. ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանը.

1. Գործուն միջոցներ ձեռնարկել 2020 թվականի ՀՀ պետական բյուջեի երեք ամիսների կատարողականի հաշվետվություններում տվյալ եռամսյակում կատարված փաստացի ծախսի գումարների մի շարք պատճառներով չներառված տվյալների գույքագրման ու ՀՀ ֆինանսների նախարարություն հաջորդիվ ներկայացվող հաշվետվություններում դրանց ամբողջական ներկայացնելու ուղղությամբ՝ այսուհետ հնարավորինս բացառելով նշված բնույթի ֆինանսական ցուցանիշների չներառումը ՀՀ պետական բյուջեի եռամսյակային կատարոցակնի հաշվետվություններում:
2. Նախարարության համապատասխան կառուցվածքային ստորաբաժանումների միջոցով խիստ հսկողություն սահմանել բյուջետային հատկացումների ստորադաս կարգադրիչների և/կամ պայմանագրային կողմերի ֆինանսատնտեսական գործունեության արդյունքում ներկայցվող հայտերի/կատարողականների և սահմանված հաշվետվությունների՝ ժամանակին ու ամբողջական ներկայացնելու նկատմամբ:
3. Միջոցներ ձեռնարկել ՀՀ պետական բյուջեով սահմանված ծախսերի ծրագրային ցուցանիշների թերակատարումները լրացնելու, ինչպես նաև գերակատարումները հնարավորինս բացառելու ուղղությամբ: Մասնավորապես գնման գործընթացները և այլ անհրաժեշտ նախապատրաստական աշխատանքներն իրականացնել պլանավորված պահանջարկի ժամկետների տրամաբանությամբ՝ պարտադիր հաշվի առնելով այդ գործընթացներում երևույթաբար առկա չկայանալու կամ ընթացքը բողոքարկելու <<Գնումների մասին>> ՀՀ օրենքով (ՀՕ-21), ինչպես նաև ՀՀ կառավարության 04.05.2017 N526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգով նախատեսված կարգավիճակները ու դրանց հետևանքում վրա հասնող ժամկետները:
4. Ընթացիկ եզրակացությունում ներկայացված վերոնշյալ առաջարկությունների հիման վրա մշակել և հաստատել միջոցառումների/գործողությունների ծրագիր, որը կպարունակի յուրաքանչյուր միջոցառման համար պատասխանատու ստորաբաժանում/ներ և միջոցառման կատարման իրատեսական ու ողջամիտ ժամանակացույց: